1877—1878 թթ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԸ

Զ. Մ. ՂԱՍԱՐՅԱՆ

Բոսնիայի և Հերցեգովինայի 1875 թ. և բուլղարների 1876 թ. Ապրիլյան ապստամբությունները իրենց վրա բևեռեցին Ռուսաստանի և ամբողջ Եվրոպայի առաջադեմ մարդկանց ուշադրությունն ու զայրույթը՝ արյունալի կոտորածների կազմակերպման առիթով։

Ռուս հասարակությունն առաջինը բողոքի ձայն բարձրացրեց թուրքական բարբարոսների կողմից կիրառվող՝ ժողովուրդների բնաջնջման քաղաքականության դեմ։ Սուլթանական բռնապետության դեմ ծավալված շարժման մեջ ընդգրկվեցին ռուսական մշակույթի ու գիտության այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին Լ. Ն. Տոլստոյը, Ֆ. Մ. Դոստոևսկին, Ի. Ս. Տուրգենևը, Յ. Ն. Պոլյանսկին, Դ. Ի. Մենդելեևը, Ի. Մ. Սեչենովը, Վ. Մ. Բեխտերյովը։ Հետագայում Վ. Մ. Բեխտերյովը դարձավ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակիցը, ղեկավարելով ռուսական բժշկական գումարտակը։

Ենիչերիների ու բաշիբոզուկների կամայականությունների և սարսափելի կոտորածների դեմ իրենց վրդովմունքն ու զայրույթն արտահայտեցին նաև համաշխարհային առաջադեմ մտքի ներկայացուցիչները Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում, Հունգարիայում և այլ երկրներում։

Ռուսական մամուլը առանձնապես ողողվեց բազմաթիվ հոդվածներով, որոնք պահանջում էին դադարեցնել արյունահեղությունները և օգնության ձեռք մեկնել օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդներին։ Պետերբուրգում, Մոսկվայում, Ռոստովում և Ռուսաստանի այլ քաղաքներում, տարբեր կազմակերպությունների նախաձեռնությամբ, Ապրիլյան ապստամբությունից տուժածներին ցույց տրվեց նյութական օգնություն։ Ռուս-թուրքական պատերազմի նախօրեին զանազան հանգանակություններից հավաքվել էր 14 միլիոն 500 հազար ռուբլի, 62155 փութ շաքար, 71539 փութ վարսակ, 20000 գլուխ խոշոր և 6000 մանր եղջերավոր անասուն և այլ մթերքներ[1]։

Ապստամբ բալկանյան ժողովուրդներին օգնելու գործին մասնակցեցին նաև Անդրկովկասի ժողովուրդները, հատկապես հայերը։ Հայկական պարբերականներում լայն արձագանք գտան բուլղարների հերոսական ելույթները։ Թերթերի էջերում հանդես եկան բազմաթիվ հայ մտավորականներ (Մ. Փորթուգալյան, Գրիգոր Արծրունի, Ստ. Պալասանյան, Ռ. Պատկանյան և շատ ուրիշներ), որոնք ջերմորեն ողջունեցին հերոս ժողովրդի պայքարը։ Նրանց հոդվածներն ու ելույթները հսկայական նշանակություն ունեցան ապստամբության մասնակիցների և տուժողների օգտին միջոցներ հավաքելու գործում։ Զգալի գումարներ հավաքվեցին Թբիլիսիում, Վանում, Էջմիածնում, Կոստանդնուպոլսում և այլ քաղաքներում։

---

[1] *Տե՛ս* «Работническо дело», София, 1977, май 17.

1876 թ. Ապրիլյան ապստամբության թեժ օրերին Պլովդիվի (Ֆիլիպե) վիլայեթի քաղաքներում ու գյուղերում (Պանագյուրիշտե, Պազարջիկ, Կոպրիվշտիցա, Բրացիգովո, Բատակ, Պերուշտիցա և այլն) բնակվող հայերն անձնուրացաբար օգնեցին ապստամբության մասնակիցներին։ Խաչեր Վարդազարմյանը, Գևորգ Ռուսչուքլյանը, Գրիգոր Զաքրրովը, Կարապետ Փափազյանը, Արթին Ռիդիկովը և շատ ուրիշներ հարյուրավոր բուլղար ապստամբների և նրանց համախոհների փրկեցին կախաղանից, գնդակահարությունից ու աքսորից։

Բուլղար ժողովուրդը իր ազատագրության գործը կապում էր Ռուսաստանի հետ, քանի որ Ապրիլյան ապստամբությունը վերջնականապես ապացուցեց, որ սեփական ուժերով հնարավոր չէր թոթափել օսմանյան դարավոր լուծը։ Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը նշել են. «Սերբը, բուլղարացին, Բոսնիայի ռայան, մակեդոնացի ու թրակիացի սլավոն գյուղացին մեծ աղգային համակրանք են տածում դեպի ռուսները...։ Ինչ էլ որ լինի նրանք Պետերբուրգից են սպասում մեսիային, որը փրկելու է նրանց բոլոր չարիքներից»[2]։

Ինչպես հայտնի է, 1877 թ. ապրիլի 24-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային։ Ռուսական բանակների զորակոչման և համալրման ընթացքում կազմակերպվեցին բազմաթիվ կամավորական ջոկատներ ու գնդեր՝ բուլղարներից, ուկրաինացիներից, ռումինացիներից, սերբերից, մակեդոնացիներից, չերնոգորցիներից, հույներից, հայերից ու այլ ժողովուրդներից, որոնք դարերի ընթացքում պայքարում էին օսմանյան տիրապետության դեմ։

Ռուսական գլխավոր հրամանատարությունը, հաշվի առնելով կամավորական խմբերի և աշխարհազորերի ստեղծման հսկայական նշանակությունը, հատկապես այն ժողովուրդներից, որոնց երկրներով շարժվելու էր ռուսական բանակը, բոլոր միջոցներով օժանդակում էր նրանց զինմանն ու ղեկավարմանը։

Պատերազմի ընթացքում ստեղծվեց բուլղարական աշխարհազորը, որը բաղկացած էր 6 գումարտակներից՝ մոտավորապես 7444 հոգուց[3]։ Քիշինևը հանդիսանում էր բուլղարական կամավորների հավաքատեղին։ Նրանց գլխավոր հրամանատարը գեներալ Ն. Գ. Ստոլետովն էր։ Աշխարհազորի կազմակերպման ու զինման գործում նրան զգալի օգնություն ցուցաբերեց Մոսկովյան սլավոնական կոմիտեի նախագահ Ռ. Ս. Ակսակովը։

1876—1877 թթ. ձմռանը, Ապրիլյան ապստամբության պարտությունից հետո, Բուխարեստում գործող Բուլղարական բարեգործական կենտրոնական միությունը կազմում էր ապագա զորագրվողների ցուցակները։ Ցուցակագրվում էին բոլոր այն բուլղարները, որոնք ապստամբությունից հետո ապաստանել էին եղբայրական Ռուսաստանում և հյուրընկալվել Ռումինիայում։ Աշխարհազորը բաղկացած էր գյուղացիներից, արհեստավորներից, ուսուցիչներից և ուսանողներից։ Բուլղարական գումարտակները, որոնց թիվը Բուլղարիայում ավելացավ ևս 6 զորաբաժիններով, ռուսական բանակների

---

[2] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, էջ 9։

[3] «Руско-турската освободителна война 1877—1878 гг.», София, 1977, էջ 50։

շարքերում հերոսական մարտեր մղեցին Սուլեյման փաշայի գերազանցող ուժերի դեմ Շիպկայի և Ստարա Զագորայի մոտ։ Նրանք թույլ չտվեցին թուրքական բանակին հասնել Պլևենում շրջապատված Օսման փաշայի զորքերին, որոնք հուսահատ մարտեր էին մղում պաշարումից դուրս գալու համար։

Այդ նույն ժամանակ Կովկասում ռուսական բանակի հետ միասին թուրքերի դեմ կռվում էին բազմաթիվ հայեր, որոնց մասնակցությունը զգալի օժանդակություն էր Հայկական լեռնաշխարհում ռուսական բանակների առաջխաղացման համար[4]։ Բազմաթիվ հայ սպաներ ու շարքայիններ մարտնչում էին նաև Բալկանյան ռազմաճակատում։ Դժբախտաբար հայտնի չեն բոլորի անունները։ Միայն զոհվածների ու ծանր վիրավորվածների ցուցակներից պարզվում են որոշ մասնակիցների անունները։ Պլևենի անհավասար մարտերում, օրինակ, սպանվում է Բաժբեուկ Մելիքովը, որ ծառայում էր որպես շտաբս-կապիտան՝ 120-րդ Սերպուխովյան գնդում։ Նույն մարտերում ծանր վիրավորվածներից էր 121-րդ Պենզենյան գնդի կապիտան Պողոսովը։ Պլևենի մարտերում են զոհվել 6-րդ Լիպավյան գնդի կապիտաններ Լորիս-Մելիքովը և Մարկոսովը[5]։ Պլևենի մարտերում շրջապատված և գերված Օսման փաշայի ձեռքից սուրը վերցնում է ռումինական բանակում մարտնչող հայորդի Միքայել Չերկեզը։ Մարտից հետո գնդապետ Չերկեզը ստացավ գեներալ-մայորի աստիճան և պատերազմին մասնակցեց մինչև հաղթական ավարտը։ Շիպկայի հերոսամարտերում զոհվում է մայոր Լազարևը։ Բուլղարիայի առանձին քաղաքների գրավման ժամանակ Պլովդիվում զոհվում են Պավլովյան գնդից Հայկանովը և Տատյանը։ Նույն մարտերում են զոհվում 47-րդ Ուկրաինական հետևակային գնդից Ավետիկովը, ռուսական բանակի կապիտաններ Սերվինյանը և Հախվերտովը[6]։ Ռուս-թուրքական պատերազմի զոհվածների հիշատակին Պլևենում կառուցված դամբարանի մարմարե տախտակների վրա ռուս, ուկրաինացի, ռումինացի, սերբ, հույն, չերնոգորցի, մակեդոնացի, բուլղար մարտիկների շարքում փորագրված են հայորդի շտաբս-կապիտաններ Բաժբեուկ Մելիքովի, Մարկոսովի և Լորիս-Մելիքովի անունները։

Պատերազմին իրենց մասնակցությունը ցուցաբերեցին նաև Բուլղարիայում ապրող հայերը։ Պլովդիվի, Պազարջիկի, Վառնայի, Կավառնայի, Ռուսեի, Բերկովիցայի և այլ վայրերի ազատագրման մարտերում նրանք զանազան ծառայություններով օգնում էին ռուսական բանակներին, նպաստելով նրանց առաջխաղացմանը։ Պատերազմի ընթացքում բազմաթիվ բուլղարահայեր, որոնք գտնվում էին թուրքական վարչական ծառայության մեջ և բանակում, լքում էին իրենց պաշտոնն ու ծառայությունը և անցնում ռուսական բանակի կողմը։

1877 թ. Ստեփան Ռ. Արզարյանը թուրքական բանակի 204-րդ գնդի հաշվետարն էր Բերկովիցա քաղաքում։ Ռուս-թուրքական պատերազմի օրերին կորագնդի հրամանատարը որոշում է կոտորել քաղաքի բուլղար բնակչությունը և այրել այն։ Ստեփան Արզարյանը իմանալով այդ, բուլղար միտրոպոլիտի հետ գնում է փաշայի մոտ և համոզում, ասելով, որ թուրքական զորամասի

---

4 Ս. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 200—201։

5 С. Овнанян, Армено-български исторически връзки, София, 1972, էջ 126

6 Նույն տեղում։

նահանջը ձևական և ժամանակավոր բնույթ է կրում, հետևաբար միտք չունի քաղաքը այրել և կոտորել բնակիչներին, քանի որ նորից վերադառնալու են Բերկովիցա։ Փաշան համոզվում է և հեռանում քաղաքից։ Ստեփան Աբգարյանը փոխանակ մեկնելու թուրքական նահանջող բանակի հետ, անցնում է ռուսական զորքերի կողմը։ Հաջորդ օրը ռուսական բանակը ազատագրում է Բերկովիցա քաղաքը[7]։

1877 թ. հուլիսի 5-ին ռուսական զորաբաժինը Սվիշտովը դրավելուց հետո պարտության մատնեց Աբդուլ Քերիմ փաշայի 80-հազարանոց բանակը և դրավեց Բյալա քաղաքը։ Այնուհետև ամուր հենակետ ստեղծելով Յանտրա գետի ավազանում, նա ճանապարհ հարթեց դեպի Ռուսե (Ռուսչուք)։ Մարտերը շարունակվեցին մինչև ուշ աշուն։

Ժամանակակից Ռուսեի Ս. Աստվածածին հայկական եկեղեցու ավագ քահանա Կարապետ Պոյաճյանը հետևյալ ձևով է նկարագրել այդ մարտերը. «...Յամին 1877, պատերազմ հրատարակեցավ ընդ մէջ Ռուսաց և Օսմանուց. մեծատունքն քաղաքիս (խոսքը Ռուսչուք քաղաքի հարուստ հայերի մասին է.—Զ. Ղ.) ցրուեցան յայլ եւ այլ կողմանս, որ ի Շումնու (Շումեն), որ ի Կոստանդնուպոլիս եւ որ ի հեռաւոր վայրս, ես մնացի աստահօր ընդ աղքատիք գաստակարգութիւնս ժողովրդոց։

Ահեղ պատրաստութեամբ եկն եհաս բանակն Ռուսաց եւ ճակատեցաւ առ ափամբ գետոյն յայնկոյս Դանոբա ի կողման Ռումանիոյ. եւ տաճիկք նախայարձակ լեալ մերթ ընդ մերթ ի վերայ նոցա արձակէին զռումբս իւրեանց որոտընդոստ ճայթմամբ, որպէսզի արգելցեն զձեռնարկութիւն նոցա։ ...Ահ եւ սարսափ տիրեաց ի վերայ բնակչացն, կեսարացի Անվար բաշայն արտաքսեաց զմեզ ի քաղաքէս, բաց ի զօրականացն ոչ զոք եթող. մինչեւ չմնալոյ եւ ոչ մի»[8]։

Այնուհետև Կարապետ Պոյաճյանը խոր վշտով նկարագրում է հայերի բռնագաղթը քաղաքից, որոնց մեծ մասը հաստատվում է Զերվենա վոդա գյուղում։ Այստեղ, ռազմաճակատից հեռու, հայերը մնում են մի քանի ամիս՝ մինչև ռուսական զորքերի կողմից Ռուսչուքի գրավումը։ Նրանցից ոմանք, ծանոթ լինելով թուրքական բանակի դիրքերին և սպառազինությանը, այդ մասին տեղեկություններ են հաղորդում և գործակցում բուլղարների հետ։ Հայերից շատերը անձնուրացաբար կատարում էին զանազան ծառայություններ, վտանգի ենթարկելով իրենց կյանքն ու ընտանիքների ապահովությունը։ Այդ համագործակցությունը չէր վրիպել թուրքական իշխանությունների ուշադրությունից։ «Օր մի բարկացեալ էր ընդհանուր հրամանատար Ահմետ բաշայն ի վերա Յակոբայ Դաղանճեան, վասն բարեկամաբար վարելոյն ընդ բոլղարս, հրամայէ Անտոն պէյին դրեալ թուղթ աքսորանաց. եւ իմ լուեալ զայս փութացեալ գնացի առ Օսման բաշայն եւ աղաչեցի. զի ներումն շնորհեացն. ...եւ այլվոք բազմօք հաճեալ զմիտս ատենակալաց. պատառեցու թուղթն աքսորանաց եւ ազատեցաւ»[9]։

---

7 «Երևանյան, Սոֆիա, 1 մարտի 1963։

8 Կարապետ Պոյաճյան. Պատերազմն ընդ մէջ Ռուսաց և Օսմանուց յամի 1877—1878 (այս ձեռագիրը մեզ սիրով նվիրեց բուլղարահայ բանասեր-պատմաբան Ներսես Գասապյանը)։

9 Նույն տեղում, էջ 5։

1878 թ. փետրվարի 7-ին ռուսական բանակի զորաբաժինները մտան Ռուսչուք. Բոնապարտի ենթարկված բնակչությունը, այդ թվում և հայերը, վերադառնում են քաղաք և դիմավորում հաղթական զորքերին։ Ականատեսը այսպես է նկարագրել ռուսական բանակի մուտքը Ռուսչուք. «.....Ի բազմութենէ զօրաց եւ զօրապետաց երկիրս դղրդէր, եւ երկինք թնդացին ի ձայնէ հնչմանց փողոց, փանդռանց եւ այլոց նուագարանաց։ Մտանք յեկեղեցին բոլղարաց, ժէնէրալ Թօթլէպէն եւ այլ բարձրաստիճան պաշտօնական մարմինք ընդ նմա, զօրք շրջապատեալ զփողոցսն, մինչեւ յերեկոյ գային զօրքն եւ լնուին զքաղաքն. յորս էր Աստրախանցի Գրիգոր աղա, որդի Տէր Ահարովն քահանայի Դադաշեանց, եւ երկու բժիշկ։ Հայնժամ փառատրական մաղթանս կատարեաց Արհիմանտրիտն, եւ ի վերջին Քարող խօսեցաւ՝ զտառապանսն զոր կրեցին, գեղեցիկս նկարագրելով, եւ զշնորհակալութիւն իւր յայտնեաց վասն Քրիստոսազօր եւ Աւգոստափառ Թագաւորին Ռուսաց, եւ զօրաց նորին՝ որք զարիւնս իւրեանց նուիրեցին ի փրկութիւն Բոլղար աշխարհին, եւ ի փառս Քրիստոնէութեան»։ Շարունակելով իր պատմությունը, ավագ քահանա Կարապետ Պոյաճյանը հաղորդում է. «Հետոյ ժէնէրալ Թօթլէպէն՝ վասն իմ հարցանէ առ վարդապետն եւ ասէ. ո՞վ էր այն որ ընդ քահանայս ձեր այլատարազ զգեստիւք երեւէր, պատասխանէ Արհիմանտրիտն թէ Հայոց քահանայ էր. յայնժամ վերստին ասէ ժէնէրալն. թէ երեւի սիրով էք ընդ միմիանս. այո՛ ասէ վարդապետն։ ...Եւ մեծամեծ անձինք ընդ Թօթլէպէն իջաւանեցան յապարանս Մ. Ստեփանեանց, յանդիման տան մերում»[10]։

Կարապետ Պոյաճյանի ձեռագրից պարզվում է, որ Ռուսչուքը գրաված ռուսական զորաբաժնում եղել են աստրախանցի Գրիգոր Դադաշյանը և երկու հայ բժիշկներ, որոնք, ինչպես ասված է ձեռագրում, եղել են կաթողիկոս Ներսես Աշտարակեցու բարեկամները։ Հետաքրքիր են այն տողերը, որտեղ գեներալ Տոտլեբենը նկատում է հայ և բուլղար հոգևորականների միմյանց նկատմամբ տածած սերն ու հարգանքը։ Պարզվում է նաև, որ ռուսական բանակի հրամանատարները իջևանել են Ռուսչուքի հայտնի հայերից Մ. Ստեփանյանցի ապարանքում։ Փետրվարի 9-ին գեներալ Տոտլեբենը Մ. Ստեփանյանցի տան դահլիճներից մեկում հրավիրում է քաղաքի բոլոր մեծամեծներին՝ թուրք, բուլղար և հայ ժողովուրդների ներկայացուցիչներին։

«... Ընդ երկարութիւն դիւանին կարգեցաք կանգնեցաք իւրաքանչիւր աղգ զատեալ ի միմեանց. յոյժ զարմանալի էր տեսարանն՝ զի երեսք ոմանց առ խնդին զուարթանային, եւ կէսք գլխիկոր եւ տխրադէմ զաչսն անգամ ի վեր ամբառնալ ոչ կամէին. բայց եւ այնպէս իւրաքանչիւր զօրք եւ զօրապետք, աղգք եւ աղինք համազգեստիւք իւրեանց եւ պատուանշանօք զարդու զարգարեալ. եւ յոսկէվառ հանդերձից նոցա փայլատակունք հատանէին։ Եւ մինչդեռ այսպէս սխրացեալ կայր կառաւն, յառաջ մատեան բաշայք եւ ըստ հրամանի կայսերն իւրեանց յանձնեցին զՌուսջուգ և զհամայն Բոլղարիա. ի ձեռս Տերամբ զօրացեալ բարձր բազկացն Ռուսաց։ Խօսել կալաւ ժէնէրալ Թօթլէպէնն ի ռուսաց բարբառ եւ ասէ։ «Արարիչն տիեզերաց՝ որ այսօր զայս երկիրս պարգեւեաց մեզ կառավարել ըստ կամաց իւրոց. ձեզ ասեմ, ո՞վ բնակիչք երկրիս. այսուհետեւ եղբայրօրէն եւ խաղաղութեամբ կենցաղավարեսջի՛ք ընդ միմեանս, վնաս ինչ ոչ արարեալ ումեք. եթէ ոք անսաստեալ

10 Նույն տեղում, էջ 8։

հրամանաց մերոց դիմակաց լիցի, սաստիկ պատիժս կրէ. ջնջի՛ք ի մտաց ձերոց, թէ վերստին երկիրս այս անցանէ ի ձեռս օսմանցւոց. Աստուած պարգեւեաց մեզ այժմ. Եւրոպէական ազգաց թագաւորութիւնք եւս հաստատեցին եւ վավերացուցին. հնազանդ եւ հպատակ կացջի՛ք հզօր եւ անխոնարհելի Աւգոստափառ կայսրութիւնն Ռուսաց»[11]։

Հանդիսավոր այդ խորհրդաժողովի մասնակից ավագ քահանա Կ. Պոյաճյանը այնուհետև շարունակում է. «Ոչ վարդապետն բուլղարաց ասաց ինչ, եւ ոչ ես, բայց ես ի կացեալ տեղւոջ իմում ի պատրաստի էի. եթէ ինձ եւս հարցանիցին ինչ. տալ պատասխանի։ Եւ դմտաւ ածեալ խորհէի, իգէ՞ թէ լինիցի օր, եւ Հայաստանի տեսնէի այսպէս»[12] (անշուշտ Կ. Պոյաճյանի այս խոսքերը վերաբերում են Արևմտյան Հայաստանին.—Զ. Ղ.)։

1877 թ. դեկտեմբերին, ռուսական զորքերը, անցնելով ձյունապատ Բալկանյան լեռնաշղթան, Բրակիական հարթավայրում ընդհուպ մոտեցան Պլովդիվին։ Դեկտեմբերի 31-ին գեներալներ Գուրկոն և Կարցևը շրջապատեցին Պազարջիկը։ Սուլեյման փաշան Շիպկայի և Ստարա Զագորայի մարտերից հետո թողեց հիմնովին այրված Ստարա Զագորան, համախմբեց ջարդված զորաբաժինները և շտապեց դեպի Պլովդիվ՝ ռուսական բանակների հաղթական երթը կասեցնելու համար, ճանապարհին մոխրակույտերի վերածելով գյուղերն ու բնակատեղիները։

Սուլեյման փաշայի բանակները պատրաստվում էին այրել Պազարջիկը և կոտորել բնակչությունը, սակայն սպասում էին կարգադրության Կոստանդնուպոլսից։ Այդ թեժ օրերին Պազարջիկի կայարանապետը և հեռագրատան միակ աշխատողը Հովհաննես Սվաճյանն էր։ Գիշերը, երբ հեռագրատան փոքրիկ ընդունիչը հաղորդեց չարաբաստիկ լուրը՝ «Կոտորել Պազարջիկի բնակչությունը և այրել քաղաքը», Հովհաննես Սվաճյանն առանց տատանվելու փաշային հաղորդեց հակառակը. «Չկոտորել բնակչությունը, թողնել քաղաքը»։ Թուրքական բանակը հեռացավ քաղաքից։ Առավոտյան, հունվարի մեկին, Պազարջիկի բնակչությունը գրկաբաց դիմավորեց հաղթական ռուսական զորքերին։

Բուլղարիայի ազատագրումից հետո, երբ բուլղարական իշխանությունները իմացան անվեհեր հայի այդ հանդուգն սխրագործության մասին, նրան աշխատանքի նշանակեցին Բուլղարական երկաթգծի վարչությունում, իսկ նրա մահից հետո Պազարջիկի քաղաքային համայնքի խորհուրդը, ի նշան երախտագիտության, քաղաքի փողոցներից մեկը կոչեց Հովհաննես Սվաճյանի անունով[13]։

Իր սխրագործություններով պատերազմի ընթացքում բուլղար ժողովրդի համակրանքը վայելեց Երանոս Երանոսյանը՝ Կավառնայի մարտերում, Թագվոր Էլմասճյանը, Արթին Հիդիկովը, Կարապետ Պողոսյանը, Կարապետ Թագվորյանը, Մանուկ Հինդլյանը՝ Պլովդիվում։

Երանոս Երանոսյանը ծնվել է Վառնայում։ Իր ժամանակին հայտնի բուլղարահայերից էր և թուրքական տիրապետության ժամանակ աշխատել է որ-

---

11 Նույն տեղում։ Ըստ ձեռագրի Տոտլեբենի ճառի թարգմանությունը ավագ քահանայի համար կատարել է բուլղարացի Ստոիլ Էֆենդին։

12 Նույն տեղում։

13 «Слово», София, 1939, февруари 18.

պես փոստ-հեռագրատան վարիչ Բալչիկում։ Շնորհիվ իր պաշտոնի ու դիրքի նա օժանդակել է բուլղարների ազատագրական պայքարին։ 1877 թ., երբ ռուսական բանակը շարժվում էր դեպի Վառնա, Երանոս Երանոսյանը տեղեկանում է, որ Թուրք բաշիբոզուկները պատրաստվում են կոտորել Կավառնայի քրիստոնյա բնակչությունը։ Առանց ժամանակ կորցնելու, զենքը ձեռքին նա մեկնում է Կավառնա և մասնակցում այնտեղ ծավալված մարտերին։ 1877 թ. հուլիսին նա սպանվում է Թուրքերի կողմից։ Բուլղարիայի ազատագրումից հետո Կավառնայի քաղաքային համայնքի որոշմամբ քաղաքի փողոցներից մեկը անվանվեց Երանոսի անունով[14]։

Պողոս Էլմասճյանը, նախքան Բուլղարիայի ազատագրումը, ավարտել էր բուլղարական դպրոց և հիանալի տիրապետում էր բուլղարերենին։ Պատերազմի սկզբին փոստ-հեռագրատան պատասխանատու աշխատակից Պ. Էլմասճյանին Թուրքական իշխանությունները որոշում են տեղափոխել երկրի խորքը՝ հեռու ռազմական գործողություններից։ Էլմասճյանը զգալով նրանց մտադրությունը, որոշում է անցնել ռազմաճակատ և միանալ ռուսական զորքերին։ Այդ նրան հաջողվում է և նա մասնակցում է Բուլղարիայի ազատագրման մարտերին։ Բուլղարիայի ազատագրումից հետո ռուսական հրամանատարությունը Էլմասճյանին նշանակում է Պլովդիվի փոստ-հեռագրատան բաժնի վարիչ։ Նա մեծ հարգանք էր վայելում ինչպես ռուսական հրամանատարության, այնպես էլ բուլղարական իշխանությունների կողմից[15]։ Նա պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու պատվոգրերով։

Բուլղար ժողովրդի սերն ու հարգանքն էր վայելում Կարապետ Թագվորյանը։ 1877 թ. նա Թուրքական իշխանությունների կողմից ժամանակավորապես նշանակվում է քննիչ՝ Պլովդիվի դատարանում։ Որպես այդպիսին նա կախաղանից փրկում է բուլղար մի շարք հեղափոխականների, որոնք մասնակցել էին Ապրիլյան ապստամբությանը և շարունակում էին մնալ երկրում։ Թագվորյանի ջանքերով շատ բուլղար ապստամբներ ազատվեցին մահապատժից։

Արթին Գիդիկովը ծնվել է Քիշինևում 1813 թ.։ Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, հիանալի տիրապետում էր ռուսերենին։ Երիտասարդ Գիդիկովը թողնում է իր ծննդավայրը և բնակություն հաստատում Պլովդիվում։ Զբաղվում է առևտրով և դառնում քաղաքի ազդեցիկ հայերից մեկը։ Ռուսական քաղաքացիություն ունեցող Արթին Գիդիկովը սերտ հարաբերություններ մեջ էր Պլովդիվում ռուսական կոնսուլ Նայդեն Գերովի հետ։ 1876 թ. Ապրիլյան ապստամբության օրերին նա տասնյակ բուլղար ապստամբների փրկում է կախաղանից, օգտագործելով իր դիրքն ու ազդեցությունը։ Այդ օրերին ձերբակալված մարդկանցից էր նաև հայտնի նկարիչ Ստանիսլավ Դոսպենսկին, որին ևս նա փրկում է գնդակահարությունից։ Ի նշան երախտիքի, վերջինս նկարում է Գիդիկովի դիմանկարը։ Այն պահպանվել է և այժմ ցուցադրվում է Պլովդիվի քաղաքային թանգարանում։ Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ Արթին Գիդիկովը կարևոր տեղեկություններ էր տալիս ռուսական հրամանատարությանը։ Ազատագրումից հետո այն փողոցը, որտեղ գտնվել է նրա տունը, վերանվանվել է նրա անունով։ Այժմ այդ տունը

---

14 Նույն տեղում։

15 «Поход», София, 1941, април 27.

վերածված է տուն-թանգարանի։ Երկհարկանի այդ շենքը գաղափար է տալիս ազգային վերածննդի ժամանակաշրջանի բուլղարական ճարտարապետության և քաղաքաշինության մասին։ Արթին Գիդիկովը վախճանվեց 1896 թ. Պլովդիվում[16]։

Ռուսչուքի ավագ քահանա Կ. Պոյաճյանի ձեռագրում կարդում ենք. «Յառաջին իշխանութիւն ամբարձաւ Տօնտուքով Կորսաքով, առաջին Քնեազ նըստաւ յԱթոռն Բոլղարիոյ. ընդ առաջ ելաք սմա շուրջառազգեստ, աղ եւ հաց՝ ըստ սովորության մատուցին Բոլղարք. բարի գալուստ մաղթելով, ծանոյց զմեզ Գրիգորիս մետրոպոլիտն եւ ծանօթացոյց առ մեծափառ իշխանն. եւ յերեկոյն միում ի մեծ ընթրիսն հարիւրաւոր արամբք՝ սեղանակից եղաք...։ Իջեւանն սորա էր ի մեծի տան Կարապետ Մ. Ստեփանեանց, զի քան զայս փառաւոր տուն ոչ գոյր ի քաղաքիս։ Ըստ պահանջելոյ քաղաքականութեան ի ժամանակին յայնմիկ. էջ յիշխանական Տօնտուքով Կորսաքով, եւ ի տեղի նորա յաջորդեաց Աղեքսանդր Բատէմբերգ, աղ եւ հաց հանեալ արծաթի սկտեղը մատոյց թաղապետն բարի գալուստ խնդրելով ի բարձրելոյն, եւ մեք շուրջառազգեստ ընդառաջ ելաք ընդ քահանայս Բոլղարաց. ու ինքն Տօնտուքով ծանօթացոյց զմեզ, զՀովհաննես վարդապետն եւ զիս առ Աղեքսանդր Բատեմբերգ յայնմ փառապանծ գալստեան, յայնմ օրէ եւ ապա յոյժ սիրէր զմեզ Բատեմբերգ Քնէազն»[17]։

Ռուս-թուրքական պատերազմի ավարտով բուլղար ժողովուրդն ազատագրվեց հինգդարյա թուրքական լծից։ Այդ հաղթանակի գործում նրան օգնության ձեռք մեկնեցին բոլոր եղբայրական ժողովուրդները, առաջին հերթին ռուս մեծ ժողովուրդը, որը հսկայական զոհերի գնով վերացրեց օսմանյան ստրկությունը Բալկաններում։

«Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը օբյեկտիվորեն խթանում էր Մերձավոր Արևելքի պրոգրեսիվ զարգացման ուղղությանը, երբ եվրոպական երկրների արևելյան քաղաքականությունը ներծծված էր պահպանողական ոգով, որը ձգտում էր պահպանել նեխող Օսմանյան կայսրության ամբողջականությունը, հակադրվելով զարթոնք ապրող, կենսունակ ու առաջադեմ բալկանյան ազգերին»[18]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ունեցավ նաև այն նշանակությունը, որ օբյեկտիվորեն նպաստեց Բուլղարիայում և բալկանյան մի շարք երկրներում բուրժուա-դեմոկրատական հեղափոխության որոշ հարցերի լուծմանը՝ վերացրեց սուլթանական-կալվածատիրական ֆեոդալական կարգերը, ճանապարհ հարթեց կապիտալիզմի զարգացման համար։ Խոշոր բեկում կատարվեց բուլղար ժողովրդի պատմության մեջ։

---

16 «Слово», София, 1939, февруари 18.

17 Կ. Պոյաճյան, նշվ. աշխ., էջ 13։

18 Васил Коларов. Избрани произведения, т. III, София, 1956, էջ 393։

РУССКО-ТУРЕЦКАЯ ВОЙНА 1877—1878 гг. И АРМЯНЕ В БОЛГАРИИ

З. М. КАСАБЯН

(Резюме)

В своей освободительной борьбе против оттоманского ига болгарский народ всегда рассчитывал на братскую помощь России. Дружба и взаимопомощь возросли во время русско-турецкой войны, когда русский народ ценой больших жертв освободил Болгарию от пятивекового турецкого ига. В этой войне рядом с русскими, болгарами, украинцами, румынами, сербами, македонцами, греками, черногорцами воевали и армяне. В боях на Шипке, при Плевне, Пловдиве, Варне, например, погибли Бажбеук-Меликов, Погосов, Лорис-Меликов, Маргосов, Лазарев и другие.

Армяне принимали активное участие в Апрельском восстании и русско-турецкой войне. Болгарский народ чтит память Оганеса Сваджяна, Ераноса Ераносяна, Артина Гидикова, Тагвора Элмасджияна, Карапета Тагворяна, Манука Хиндляна, Хачера Вардазармяна и других. Многие армяне, уцелевшие от турецких погромов и резни, нашли убежище в братской Болгарии после ее освобождения.